

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԼՈՌԻ ԽԱՐՉՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ






ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

❖ Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովում ծրագրով 2018թ. հատկացվել էր 460.0 մլն. դրամ, աշխատանքները իրականացվել և ավարտվել են 2019 թվականին: Կատարված աշխատանքների արդյունքում ավարտական տեսքի է բերվել նախկինում կիսակառույց մնացած 44 առանձնատներ: Ֆինանսական միջոցների տնտեսումը նշված ծրագրով կազմում է մոտ 110.8 մլն. դրամ, որով նախատեսվում է ավարտական տեսքի բերել լրացուցիչ ևս 7 անավարտության տարբեր աստիճան ունեցող կիսակառույց առանձնատներ: 2019թ.-ին նշված ծրագրով հատկացվել է ևս 452.3 մլն. դրամ և 677.9 մլն. դրամ, աշխատանքները ընթացքի մեջ են և կավարտվեն 2020թ.-ին:

Համայնքներ


- ❖ 2019 թվականի համայնքային բյուջեների եկամուտների ցուցանիշները նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 15,7%-ով, կամ եկամուտները ավելացել է 1129,3 մլն. դրամով:
- ❖ Մարզպետարանի ամենօրյա ուշադրության կենտրոնում է համայնքների բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման գործընթացը, ձեռնարկվում են համապատասխան միջոցներ և քննարկումներ, ինչի արդյունքում համայնքների սեփական եկամուտների հավաքագրումը 2018թ-ի նկատմամբ կազմել է 110,3%, կամ նախորդ տարվա նկատմամբ ավել է հավաքագրվել 236,1 մլն. դրամ:



- ❖ Առողջապահության ոլորտում մարզպետարանի ենթակա կազմակերպություններում 2019թ.-ին եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ավելացել է 34.6%-ով և կազմում է 5993.2 մլն. դրամ, որից 29.4%-ով ավելացել է պետական պատվերի գումարները՝ կազմելով 4755.2 մլն. դրամ, 66.3 %-ով ավելացել է վճարովի


ծառայությունների մուտքերը՝ կազմելով 1202.5 մլն. դրամ: Ոլորտի աշխատակիցների միջին աշխատավարձը նախորդ տարվա նկատմամբ ավելացել է շուրջ 23%-ով:

Պետական պարտքերի և վճարովի ծառայությունների դինամիկան՝ 2017-2019թթ



- ❖ Կրթության ոլորտում 2019թ. ֆինանսավորումը կազմել է 7056.1 մլն. դրամ, կամ աճը 2018թ. նկատմամբ կազմել է 4.2 տոկոս: Սեպտեմբերի 1-ից 10 տոկոսով բարձրացել է մանկավարժների աշխատավարձերը, որի արդյունքում բարձրացել է թվով 3623 մանկավարժների աշխատավարձեր:

Կրթության ոլորտին հատկացված գումարները՝ 2017-2019թթ




- ❖ Ծախսերի արդյունավետ իրականացման և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման արդյունքում 2019 թվականին մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի գծով առաջացել է 31.9 մլն. դրամ տնտեսում, այդ թվում՝ աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ հոգվածով՝ 25.2 մլն. դրամ, էներգետիկ ծառայություններ հոգվածով՝ 3.1 մլն. դրամ, տրանսպորտային նյութեր հոգվածով՝ 1.3 մլն. դրամ և այլն:
- ❖ Տնտեսումներ առկա են նաև «Մարզային նշանակության ճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրով՝ 20.5 մլն. դրամ, «Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում» ծրագրով՝ 19.6 մլն. դրամ:
- ❖ 2019 թվականի բյուջեով մարզպետարանի պահպանման ծախսերում ավելացած նոր հոդվածի «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ», արդյունքում վճարվել է 93.2 մլն. դրամի չափով պարգևատրումներ: Նշված

պարզևատրման գումարի հաշվին աշխատակիցների միջին աշխատավարձը բարձրացել է շուրջ 25 տոկոսով:



ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ կառավարության միջգերատեսչական հաճնաժողովում հաստատվել է 56 սուբվենցիոն ծրագիր 24 համայնքներ ից: Մինչև տարեվերջ ավարտին է հասցվել 49-ը, մյուս 7-ը՝ ծավալների մեծության եւ տեխնիկական որոշ խնդիրների պատճառներով կավարտվեն 2020թ.-ին: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 1893.6մլն դրամ, որին պետական աջակցության գումարը կազմում է 955.6մլն դրամ (50.46%), համայնքային ներդրման չափը՝ 884.9մլն դրամ, այլ ներդրումներ՝ 53.0մլն դրամ:



- ❖ 2019թ. մարզի համայնքներին պետական բյուջեից 55 ծրագրերի համար (1818808.7 հազ. դրամ ընդհանուր արժեքով) սուբվենցիա հատկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներով նախատեսվել է հատկացնել 925712.8 հազ. դրամ: 31.12.2019թ. դրությամբ համայնքներին վճարվել է 711063.4 հազ. դրամ սուբվենցիոն 50 ծրագրերի իրականացման համար, ընդ որում 1 ծրագրի մասով ֆինանսավորումը կատարվել է մասամբ, քանի որ ծրագիրը լրիվ ավարտված չէր և վճարումը հետաձգվել է 2020թ., 5 ծրագրեր ամբողջությամբ են հետաձգվել 2020թ., ընդ որում հետաձգված ծրագրերի համար չվճարված սուբվենցիայի գումարը կազմում է 209999.1 հազ. դրամ: Ըստ պայմանագրերի աշխատանքների կատարման արդյունքում, համաձայն կատարողական ակտերի, տնտեսումը կազմել է 4650.3 հազ. դրամ, որն ամբողջությամբ կվերադարձվի պետական բյուջե:

- ❖ Ճանապարհաշինական աշխատանքներ իրականացվել են մարզի 12 համայնքներում (Վանաձոր, Ստեփանավան, Ախթալա, Ալավերդի, Սպիտակ, Օձուն, Սարամեջ, Մարգահովիտ, Ջրաշեն, Դսեղ, Գոգարան, Դարպաս): Ոլորտում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են 619.1մլն դրամ ծավալի աշխատանքներ՝ համատարած ասֆալտապատում - 3.626կմ, սալիկապատում - 0.6կմ, փոսալցում - 19180քառ.մ: Մարգահովիտում «Էյ Թի ՓԻ» բարեգործական հիմնադրամի 33.9մլն դրամ ֆինանսական աջակցությամբ իրականացվել է ներհամայնքային ճանապարհի 1.1կմ ասֆալտապատման եւ 1.4կմ գրունտային նորոգման աշխատանքներ: Մարզկենտրոն Վանաձորում պլանավորվել էր 16 ներհամայնքային փողոցների հիմնանորոգում, որոնց աշխատանքները տարեվերջի դրությամբ մնացել են թերի՝ 2020թ.-ին ավարտին հասցնելու պայմանով:
- ❖ Մեծ Այրում ու Փոքր Այրում, Լորուտ, Լեջան բնակավայրերում եւ Մարգահովիտ, Սարահարթ համայնքներում իրականացվել են մոտ 16կմ խմելու ջրագծերի կառուցման աշխատանքներ: Հարթագյուղ, Սարահարթ, Օձուն համայնքներում, Ճոճկան բնակավայրում կառուցվել եւ վերանորոգվել են շուրջ 8կմ երկարությամբ ոռոգման համակարգեր:
- ❖ Մարզի 11 համայնքի 23 բնակավայրում լուծվել են գիշերային լուսավորության խնդիրը: Ընդհանուր առմամբ 35կմ մոտ 900 լուսատուներով: Կաթնաջուր, Լեռնանցք, Սարահարթ համայնքներում տեղադրվել են ֆոտովոլտային կայաններ, ինչը հետագայում հնարավորություն կտա խնայել էլեկտրաէներգիայի վրա ծախսվող ֆինանսական միջոցները: Ծրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 124.8մլն դրամ:
- ❖ Տաշիր և Ախթալա համայնքներում վերանորոգվել են բազմաբնակարան շենքերի տանիքներ այդ թվում՝ Շամլուղ բնակավայրի թիվ 10, թիվ 2, Ախթալա բնակավայրի Աբովյան թիվ 21 և Օրջոնիկիձեի թիվ 3 շենքերի տանիքները, Տաշիր համայնքի Անի բնակելի զանգվածի թիվ 2, թիվ 3 և թիվ 7 շենքերի տանիքները:
- ❖ Սանմաքրման աշխատանքներ իրականացնելու համար Վանաձոր համայնքը ձեռք է բերել բազմաֆունկցիոնալ 2 տեխնիկա, Մեծավան, Լեռնապատ, Կաթնաջուր, Լոռի Բերդ համայնքները ձեռք են բերել 5 տրակտոր և 8 անուն գյուղտեխնիկա՝ համապատասխան սարքավորումներով: Լոռի Բերդ եւ Գյուլագարակ համայնքներում տեղադրվել են 11 հակակարկտակայաններ, որոնք կարկտահարությունից կպաշտպանեն համայնքների շուրջ 900հա հողատարածքներ:
- ❖ Վանաձոր, Ախթալա, Լոռի Բերդ, Տաշիր, Մեծավան համայնքներում իրականացվել են հասարակական նշանակության շենք շինությունների վերանորոգման աշխատանքներ: Լոռի Բերդ, Ուռուտ, Սվերդլով բնակավայրերում վերանորոգվել են համայնքային կենտրոններ, Մեծավանում, Ճոճկան բնակավայրերում՝ մշակույթի տներ: Մեծավան եւ Ախթալա բնակավայրերում կատարվել են նախակրթարանների վերանորոգման աշխատանքներ:
- ❖ Վանաձորում վերանորոգվել է Կ.Աբովյանի անվան կերպարվեստի թանգարանը:
- ❖ Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում վերանորոգվել է Վանաձորի Հայքի հրապարակը, տեղադրվել են ժամանակակից՝ վերջին սերնդի շատրվաններ: Հրապարակների վերանորոգման աշխատանքներ իրականացվել են նաեւ Օձունի 7 բնակավայրերում: Վերականգնման գործընթացի մեջ է Վանաձորի այգիների, պուրակների՝ շուրջ 3հա համայնքային տարածքներ:

- ❖ 2018թ. պետական բյուջեից համաֆինասավորմամբ մարզի 20 համայնքների 26 սուբվենցիոն ծրագրեր ֆինանսավորվել են 506476.0 հազ. դրամ, 2019թ-ին 2018թ. համեմատ ավել է հատկացվել 419236.8 հազ. դրամ սուբվենցիա, սակայն իրացվել է 711063.4 հազ. դրամ սուբվենցիա կամ 204587.4 հազ. դրամով ավելի կամ վճարված սուբվենցիան 2019թ. համեմատ կազմել է 140.4%, չնայած նախատեսված էր 182.8%:

Ներդրումային ծրագրեր



❖ 2019 թվականի փետրվարի 23-ին Լոռու մարզի Վանաձոր քաղաքում կայացավ <<Իմ քայլը հանուն Լոռու մարզի>> ներդրումային բիզնես-համաժողովը, որի նպատակն էր մարզերի տնտեսության և համայնքների զարգացման գործընթացներին ներգրավել Հայաստանի և արտերկրի գործարարների: Համաժողովում ներկայացվել են շուրջ 50 ծրագրեր, այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտ-22, վերամշակող և արդյունաբերական ոլորտ-13, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ-3, գյուղատնտեսական ոլորտ-12: Մշակված ծրագրերը տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

24 ներդրումային ծրագրի համար <<Ամերիաբանկ>> ՓԲԸ-ն իրականացրել է մասնագիտական փորձաքննություն՝ ռիսկայնության աստիճանը որոշելու նպատակով: Այդ ծրագրերը տեղադրվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տարածքների համաչափ զարգացմանը միտված հարթակում:

12 մշակված ծրագիր՝ շնորհանդեսային տարբերակով, ներկայացվել է Եվրամիության դեսպանատուն՝ ՀՀ Լոռու, Տավուշի և Շիրակի մարզերում զբոսաշրջության ոլորտի ծրագրերի ֆինանսավորման շրջանակներում (շուրջ 13 մլն. եվրո) ընդգրկելու համար:

Համաժողովին ներկայացված ծրագրերը ներդրումային ծրագրերը ուղարկվել են նաև Առևտրա-արդյունաբերական պալատ և Գործատուների միություն, զբոսաշրջային 6 ծրագրերի անգլերեն տարբերակները ուղարկվել են ՀՀ էկոնոմիկայի նախարարություն՝ Արաբական Միացյալ Էմիրություններ ներկայացնելու համար:

- ❖ 2018թ գործարկված «Ռադ Սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ կողմից կառուցված կոմպոզիտային գազաբալոնների գործարանում կատարվել է շուրջ 3 մլրդ. 100 մլն. դրամի ներդրում:
- ❖ Հարթագյուղ համայնքում՝ «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ, շարունակվում են իրականացվել ծրագրեր, մասնավորապես՝ հիմնանորոգվել է 2 հյուրատուն 13 մլն դրամ ներդրմամբ, գյուղատնտեսական ոչ ավանդական մշակաբույսերի մշակման աշխատանքներ 12մլն դրամ, 5 բնակարանների վերանորոգման աշխատանքներ 9մլն դրամ ներդրմամբ:
- ❖ ԵՄ ֆինանսավորմամբ և «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի աջակցությամբ կառուցվել է «Ճամփեզրյա կայան» տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կենտրոն՝ շուրջ 300 մլն դրամ ներդրմամբ:

- ❖ Ալավերդի համայնքում ընթացքի մեջ է քարանձավային տուրիզմի կենտրոնի կառուցումը, արդեն իսկ մասնավորի կողմից ներդրվել է 48 մլն. դրամ:
- ❖ «Լոռու տուրիզմի զարգացման և հետազոտության» կենտրոնը իրականացրել է «ԷկոՏուն Լոռի»՝ պլաստմասե թափոնների վերամշակում, «Pottery House Armenia»՝ կավաբուծության կենտրոն, «Debet Workation Hotel»՝ հանգստի և աշխատանքի համար նախատեսված հյուրատուն, ծրագրերը:
- ❖ Լոռու մարզպետարանի կողմից ստեղծվել է <<Տուրիստական Լոռի >> ֆեյսբուքյան էջը՝ ոլորտի ծառայություն մատուցող կազմակերպությունների ներգրավմամբ, որի նպատակն է համախմբել զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչներին մեկ հարթակում, որտեղ կներկայացվեն ոլորտի նորությունները, պետության և մասնավորի կողմից իրականացվող ծրագրերը, առաջարկներ, և հաջողված պատմություններ:
- ❖ Ստեղծվել է աշխատանքային խումբ զբոսաշրջության և ներդրումային ծրագրերի փորձագետների ներգրավմամբ առկա ծրագրերի վերամշակման և ներդրումներ ներգրավելու համար:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ



❖ << Լոռու մարզպետ Ա.Ղուկասյանի ջանքերով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 2019թ. հուլիսի 22-ից բացվել է նոր, ժամանակակից սարքավորումներով հագեցած «Ինվազիվ կարդիոլոգիայի՝ միջամտային սրտաբանության և ինտերվենցիոնալ ռադիոլոգիայի՝ միջամտային ճառագայթաբանության» բաժանմունք, որտեղ իրականացվում են և վճարովի, և անվճար ծառայություններ՝ պետական պատվերի շրջանակներում: Բաժանմունքում աշխատելու նպատակով հրավիրվել են բարձրակարգ 2 բժիշկներ՝ Արմեն Օքրոյանը և Վահե Նավասարդյանը: Վահե Նավասարդյանը Հայաստան է վերադարձել Թավշյա հեղափոխությունից հետո Սանկտ Պետերբուրգից, իսկ Արմեն Օքրոյանը՝ Երևանից, երկուսն էլ կայուն մտադրությամբ՝ ապրելու և աշխատելու Վանաձորում:

Բաժանմունքում ընդունվել են աշխատանքի նաև Երևանում մասնագիտական վերապատրաստում անցած ռենտգեն տեխնիկներ, 6 բուժքույրեր: Հետագայում՝ բաժանմունքի գործունեության ընթացքում, կազմը կհամալրվի նոր մասնագետներով: Բաժանմունքի գործարկման հիման վրա Վանաձորի բժշկական կենտրոնին << առողջապահության նախարարության կողմից լրացուցիչ տրամադրվել է պետական պատվեր՝ ինվազիվ սրտաբանության համար, որից օգտվելու հնարավորություն ունեն ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված անձինք, հաշմանդամության խումբ ունեցողները, զինծառայողները, նրանց ընտանիքի անդամները և նրանց հավասարեցված անձինք:

- ❖ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տարեսկզբին ունեցած շուրջ 150 մլն. դրամ պարտքը 01.11.2019թ. դրությամբ ամբողջությամբ մարվել է՝ նոր տնօրինության կողմից ճիշտ ղեկավարման և տնտեսավարման, ինչպես նաև դրամաշրջանառությունը «սպիտակ դրամարկղով» իրականացնելու շնորհիվ: Վերոնշյալ փաստը ապացուցում է, որ ավելացել են մատուցվող ծառայությունների ծավալները և որակը, մեծացել է ազգաբնակչության վստահությունը:
- ❖ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ՏՈՒՐ սարքավորում՝ 4 մլն.200 դր արժեքով, կլինիկական արյունաբանական վերլուծիչ 3 մլն.200 դր արժեքով, 1 «Ուազ» մակնիշի շտապ օգնության մեքենա:
- ❖ 2018 թվականի հուլիսի 1-ից, այնուհետև 2019 թվականի հունվարի 1-ից ՀՀ –ում բարձրացվել են առաջնային օղակի բուժաշխատողների աշխատավարձերը՝ գրեթե 30 տոկոսով, իսկ հիվանդանոցային օղակի բուժաշխատողներինը դեռևս մնում են նույնը: Լոռու մարզի հիվանդանոցային բուժօգնություն իրականացվող առողջապահական ընկերությունների բուժաշխատողների աշխատավարձերը հնարավոր եղավ բարձրացնել ընկերություններում վճարովի ծառայությունների ավելացման շնորհիվ: Այսպես, եթե 2018թ. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում բժշկի միջին աշխատավարձը կազմել է 267.000 դրամ, 2019թ. այն կազմում է շուրջ 455.000 դրամ:

Այլ աշխատանքներ՝

- ❖ Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի հետ համատեղ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տեղում կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ մարզի բուժքույրերի համար: Արդեն վերապատրաստվել են թվով 126 բուժքույրեր:
- ❖ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է շտապօգնության գծային մեքենա՝ հագեցված օժանդակ սարքավորումներով:
- ❖ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել որովայնային լապարասկոպիայի սարքերի և գործիքների հավաքածու, բիրքիմիական անալիզատոր, հեմատոլոգիական անալիզատոր, տեսահսկման սարքավորումներ: «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին է տրամադրվել Յազ լազերային համակարգ՝ ներառյալ սեղան և լրակազմ:
- ❖ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել իմունաֆերմենտային անալիզատոր:
- ❖ ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցության շրջանակներում և երիտասարդ բժիշկների հետ տարվող աշխատանքի արդյունքում ընդունվել են աշխատանքի նպատակային օրդինատուրայով մասնագիտացված երիտասարդ բժիշկներ՝ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 1 վիրահատող մանկաբարձ-գինեկոլոգ, «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում 1 անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, 1 սրտաբան, «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում և «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ համատեղությամբ մեկ բժիշկ ռադիոլոգ:
- ❖ ՀՀ առողջապահության նախարարության կողմից «Գուգարք» ԿՊ» ՓԲԸ-ին է տրամադրվել թվային ռենտգեն սարքավորում:

- ❖ Մի շարք առողջապահական ընկերություններ համալրվել են բժշկական սարքավորումներով և գույքով :
- ❖ Մարզի առողջապահական ընկերությունները սերտ համագործակցել են մի շարք միջազգային ընկերությունների հետ՝ «Վորլդ Վիժն Հայաստան», Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ /«COAF»/: Հայաստանի Մանուկներ Բարեգործական հիմնադրամ /«COAF»/-ի կողմից մի շարք ընկերություններում կատարվել են վերանորոգման աշխատանքներ, տրամադրվել գույք և սարքավորումներ:
- ❖ «Արարատ» մոր և մանկան առողջարան են ուղեգրվել մինչև 18 տարեկան 12 հաշմանդամ երեխաներ և 12 խնամող:




ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

- ❖ ՀՀ Լոռու մարզում 01.01.2020թ. դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստների իրավունք ունեն միջինը 13.806 ընտանիք, եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ 758, 01.09.2019թ. դրությամբ կենսաթոշակառուների թիվը 50.058, հաշմանդամների թիվը՝ 16.498 /որից՝ 678 մանկուց/: Դեռևս ՀՀ մարզերից ամենաշատ կենսաթոշակառուների եւ հաշմանդամների տվյալներ արձանագրվել են Լոռու մարզում:
- ❖ 2019թ.-ին սոցալաշտպանության բնագավառում բնակչության կենսաապահովման գծով նախատեսված էր 5.95 մլրդ դրամի /այդ թվում նաև՝ ընտանեկան եւ սոց.նպաստների, հրատապ օգնության/ վճարումներ: 2019թ. ընթացքում վճարվել է ավելի քան 4.55 մլրդ դրամ: Տնտեսումը կազմել է շուրջ 1.4 մլրդ դրամ: Ընտանեկան նպաստի բաշխման ոչ մի տարում նման տնտեսում չի եղել.
- ❖ Համեմատություն կատարելով 2018-2019թթ. տարեկան ամփոփ տվյալների միջև ունենք հետևյալ պատկերը.

Ցուցանիշեր	Վանա- ձորի ՍԱՏԲ	Սպիտա- կի ՍԱՏԳ	Ստեփա- նավանի ՍԱՏԳ	Թումա- նյանի ՍԱՏԳ	Տաշիրի ՍԱՏԳ	ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Նպաստառու ընտանիք- ների թիվը՝ 2018թ. ամփոփ /ցուցակային/	6136	4088	4156	1787	1405	17571
Նպաստառու ընտանիք- ների թիվը՝ 2019թ. ամփոփ /ցուցակային/	5803	2736	2361	1523	1383	13806
Նվազումը /թվաքանակ/՝	333	1352	1795	264	22	3765
Նվազման տոկոսը՝	5.43	33.07	43.19	14.77	1.57	21.43


- ❖ Սխալ տեղեկատվության հիմքով 2019թ. ընթացքում քաղաքացիներից ետ է գանձվել ավելի քան 13.4 մլն դրամ:
- ❖ Ավանդի դիմաց փոխհատուցում են ստացել 616 քաղաքացիներ՝ ավելի քան 132 մլն դրամի չափով:
- ❖ 2019թ. ընթացքում բնակարանի գնման հավաստագիր է տրվել թվով երեք զոհված զինծառայողների ընտանիքներին /զոհված զինծառայողներ՝ Նաիրի Ամիրխանյան՝ Մարց, Ստեփան Առաքելյան և Ստեփանյան Գագիկ՝ Վանաձոր/:
- ❖ Պետական կարևորագույն ծրագրերից է ինտեգրված սոցիալական համալիր կենտրոնների ստեղծումը: 2019թ. Լոռու մարզում շահագործվեց սոցիալական ծառայությունների ինտեգրված թվով երկրորդ համալիր կենտրոնը Տաշիր համայնքում /Նախկինում գործում էր միայն Վանաձորի համալիր կենտրոնը/: Մյուս տարածաշրջաններում պատկերը հետևյալն է. Ստեփանավանում շինարարությունը կավարտվի 2020թ. մայիսին /Վիրահայոց փող./, Ալավերդիում արդեն իսկ շինարարություն կատարելու համար մրցույթ է հայտարարվել /Զրավազանի փող./, իսկ Սպիտակում նախատեսվում է կառուցել Երևանյան խճ. հատվածում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ



- ❖ ՀՀ Լոռու մարզում գործում են 163 (149-ը մարզային ենթակայության) պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 68-ը՝ հիմնական, 80-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ավագ, 1-ը՝ հատուկ դպրոց և 3 վարժարան:
- ❖ Լոռու մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում 2019թ-ին աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը կազմել է 9/1:
- ❖ ՀՀ Լոռու մարզում 2019թ-ին համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվն ավելացել է 2-ով (Գյուլագարակի և Մեծ Պարնիի նախադպրոցական ուսումնական հաստատություններ):
- ❖ 2019թ-ի դպրոցականների առարկայական օլիմպիադային Լոռու մարզը ունեցել է հանրապետական փուլի 39 / նախորդ տարում՝ 32/ մրցանակակիր: Նախորդ տարվա համեմատությամբ մրցանակակիրների թիվն ավելացել է 7-ով:
- ❖ Ի կատարումն ՀՀ փոխվարչապետի՝ 2019թվականի հունիսի 6-ի թիվ 712-Ա որոշման 3-րդ կետի՝ ՀՀ Լոռու մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ 7-13 տարեկան 390 երեխաներ իրենց հանգիստն են անցկացրել Հանքավանի «Լուսաբաց» և «Արագած» մանկական առողջարարական ճամբարներում:
- ❖ 2019թ-ին ՀՀ Լոռու մարզից ՀՀ պետական ԲՈՒՀ-եր հայտագրվել է 906 դիմորդ, որից ընդունվել են 739 շրջանավարտներ: Նախորդ տարվա համեմատությամբ ԲՈՒՀ ընդունվողների թիվը կրկնապատկվել է (նախորդ տարի 370):
- ❖ 2019 թվականին հայտարարվել են ավելի քան 1500 ուսուցչի մրցույթներ:
- ❖ Վերահսկողության արդյունքում վերացվել է միջամտությունն ու հովանավորչությունը, բացառվել են կոռուպցիոն դրսևորումները:

- ❖ «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում 2019 թ.-ին Լոռու մարզային ենթակայության դպրոցներում այդ կառույցի կողմից գործուղվել և աշխատում են 37 ուսուցիչներ:
- ❖ ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող ուսուցիչների և աշակերտների փոխհատուցման համար 2019 թվականին հատկացվել է 2992.0 հազ դրամ: 2020 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 23160.0 հազ. դրամ /ավելացվել է 20168.0 հազ. դրամով/:
- ❖ Լոռու մարզպետի նախաձեռնությամբ իրականացված «Սմարթ» դասարաններ ունեցող դպրոցների ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների վերապատրաստման արդյունքում մարզային ենթակայության 21 դպրոցներում 2019թ. սեպտեմբեր ամսից գործում են «Համակարգչային գիտություն» առարկայի խմբակներ:
- ❖ ՀՀ կառավարության 2019թ-ի հուլիս 4-ի թիվ 872-Ն որոշման և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարարության հետ 2019թ-ի օգոստոսի 21-ին կնքված պայմանագրի համաձայն, Լոռու մարզի 118 դպրոցներում ներդրվել են Արմաթ ինժեներական լաբորատորիաներ, ընդհանուր մարզում գործում է 140 Արմաթ ինժեներական լաբորատորիաներ:
- ❖ Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրենց վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար 9 դպրոցների տնօրենների նկատմամբ կիրառվել են վարչական տույժեր, հիմնականում վերացվել են հայտնաբերված խախտումները, 2 տնօրեններ վաղաժամկետ ազատվել են զբաղեցրած պաշտոնից:
- ❖ Խնայված միջոցների հաշվին բարձրացվել է մի շարք մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսհաստատությունների՝ սահմանված դրույքաչափի 75-80 տոկոսով վճարվող աշխատողների աշխատավարձը:
- ❖ Հաստիքների վերանայման արդյունքում տնտեսված ֆինանսական միջոցների արդյունքում շուրջ 100 դպրոցներում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ:
- ❖ 2019թ. 2-րդ կիսամյակին վերաբաշխված 72.5 մլն դրամ միջոցների հաշվին ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում շինարարական աշխատանքներ են իրականացվել թվով 14 դպրոցներում:
- ❖ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում նախատեսվող փոքր թվակազմով /մինչև 100 աշ./ աշակերտներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման 2019 թվականի ծրագրում ՀՀ Լոռու մարզից ընդգրկվել են Հազվու և Մեղովկայի դպրոցները, ընթանում են նախագծման աշխատանքները:



ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

❖ Հողաշինության և հողօգտագործման (մարզային պետական հողային տեսչություն) բաժնի կողմից ցուցաբերվել է մեթոդական և իրավական օգնություն, ինչի շնորհիվ ներդրողը Գուգարք համայնքում ձեռք է բերել 0,1599 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք՝ կաթի

վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով: Ներդրողին ցուցաբերվել է իրավական աջակցություն՝ հողամասի նպատակային նշանակությունը սեղմ ժամկետում փոփոխելու նպատակով:

- ❖ Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկան (ներդրող) ինկուբատորային արտադրամաս կառուցելու նպատակով Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերից ձեռք է բերել 1,6 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամաս: Ցուցաբերված իրավական ու մեթոդական օգնության շնորհիվ հողամասի նպատակային նշանակությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և սեղմ ժամկետում փոփոխվել է:
- ❖ Մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 29-ի N 1028-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի թիվ 1088-Ն որոշումն նախագիծը:
- ❖ Մարզպետարանի միջնորդությամբ կայացած բանակցությունների արդյունքում լուծվել է Ձորագետ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող շինության մատչելի պայմաններով ներդրողին տրամադրելու հարցը, որը կնպաստի մոտ 120 նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- ❖ Կազմվել է ՀՀ կառավարության կողմից ընդունված ««Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրին հավանություն տալու և ուղղակի վաճառքով հողամաս օտարելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագիծը, որի արդյունքում Ստեփանավան համայնքի Կաթնաղբյուր բնակավայրի վարչական տարածքում կատարվել է հանքային ջրերի շաղցման գործարանի համար հողհատկացում:
- ❖ Նախապատրաստվել է «Մ. Արամյանցի տուն (ամառանոց)» պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի գնահատման և չափագրման աշխատանքներն իրականացնելու համար ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը դրվել է շրջանառության մեջ:
- ❖ Հետևողականության արդյունքում շուրջ 80 հա-ով ավելացել են գյուղատնտեսական նշանակության օգտագործվող հողատարածքները, մարզում էականօրեն ավելացել են օրինական պայմանագրերով տրամադրված գյուղատնտեսական նշանակության արոտավայրերի և խոտհարքերի ծավալը:
- ❖ Ցուցաբերված իրավական և մասնագիտական խորհրդատվության արդյունքում Մեծավան համայնքում ներդրողի կողմից ձեռք է բերվել արտադրական հողամաս: Կատարվում է տվյալ հողամասի կառուցապատման նախագծանախահաշվային աշխատանքներ:



ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

- ❖ 2019թ-ին ճանապարհաշինության ոլորտում կատարվել է 4.85 մլրդ դրամի աշխատանք, ինչի արդյունքում ընդհանուր 74.0 կմ երկարությամբ ճանապարհահատվածներ հիմնանորոգվել են, իսկ 28.05 կմ երկարությամբ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները գտնվում են

ավարտական փուլում, ավարտը նախատեսված է 2020թ-ին: Մրցութային գործընթացների արդյունքում առաջացած խնայողությունների հաշվին հնարավորություն ստեղծվեց վերանորոգել նոր ճանապարհներ: Առավել խոշոր ծրագրերն են Մ-3, Մ-6, Մ-7 և Մ-8 միջպետական նշանակության և դեպի պատմամշակութային վայրեր տանող ճանապարհների հիմնանորոգումը, ինչպես նաև Մ7 - Մեծ Պարնի - Ծաղկաբեր՝ 6.24 կմ երկարությամբ և Մ-3-Լեռնապատ՝ 4.2 կմ երկարությամբ ճանապարհահատվածների ասֆալտապատման աշխատանքները, որոնք գտնվում են ավարտական փուլում:

- ❖ Ճանապարհների հիմնանորոգման արդյունքում վերջնականապես լուծվել է տվյալ բնակավայրերի կապը միջպետական նշանակության ճանապարհների հետ, մեծացել է թողունակությունը, կրճատվել է վառելիքի ծախսը և հաղորդակցության ժամանակը:
- ❖ Միջպետական նշանակության և դեպի պատմամշակութային վայրեր տանող վատ վիճակի ճանապարհների առկայությունը մշտապես խոչընդոտում էր մարզի զբոսաշրջության ոլորտի զարգացմանը: 2019թ-ին նշված ճանապարհների առավել վատ հատվածներ հիմնանորոգվել են արդյունքում բարելավվել է մարզի ազգաբնակչության, զբոսաշրջիկների և համայնքների միջև հաղորդակցության կապը: Գրունտային ծածկույթով ներհամայնքային ճանապարհների անցանելիությունն ապահովելու համար՝ միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների ֆոնդավորումից առաջացած ասֆալտբետոնը բաշխվել է մարզի 14 համայնքներին, որի արդյունքում վերանորոգվել է շուրջ 11 կմ երկարությամբ:



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

- ❖ 2019 թ. ընթացքում գյուղատնտեսության ոլորտում (պետական, միջազգային, մասնավոր) ներդրումները կազմել են շուրջ 4 մլրդ 323 մլն 390 հազ. դրամ, նախորդ տարվա 1 մլրդ 950 մլն դրամի փոխարեն, աճը կազմում է 2 մլրդ 373 մլն 390 հազ. դրամ:
- ❖ Ջերմոցային տնտեսությունները նախորդ տարվա համեմատությամբ ավելացել են 1,05 հա-ով կամ 95%-ով և կազմել 2,15 հա:
- ❖ Սառնարանային տնտեսությունների հզորությունը նախորդ տարվա համեմատ ավելացել է 40 տոննայով կամ 10,6%-ով և կազմել 415 տոննա:
- ❖ Հակակարկտային ցանցով պատված ինտենսիվ այգիները ավելացել են 0,8 հա-ով կամ 53,3 %-ով և կազմել 2,3 հա:
- ❖ Կաթիլային համակարգով ոռոգվող հողատարածքները ավելացել են 21,3 հա-ով կամ 67,6%-ով և կազմել 52,8 հա:
- ❖ Ինտենսիվ այգիները ավելացել են 10,9 հա-ով կամ 34,6 %-ով և կազմել 42,4 հա:
- ❖ Հակակարկտային կայանքների թիվը ավելացել է 16-ով կամ 39%-ով և կազմել 57:
- ❖ Ոռոգվող հողատարածքները ավելացել են 874 հա-ով, փաստացի հնարավոր ոռոգվող շուրջ 2500-ի փոխարեն:

- ❖ ՀՀ պետական աջակցության ծրագրի շրջանակներում և մարզպետարանի աջակցությամբ ինչպես նաև, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և Ավստրիական զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի կողմից իրականացվող <<Անասնապահության զարգացում Հայաստանում հարավ-հյուսիս>> ծրագրերի շրջանակներում և թվով 4 ֆերմերների համաֆինանսավորմամբ մարզի Մարզահովիտ, Տաշիր համայնքներում և Բովաձոր բնակավայրում կառուցվել է թվով 4 առաջատար, <<խելացի>> անասնաշենքեր: Ներդրման գումարը կազմել է ընդամենը 226.5 մլն. դրամ, որից <<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ-ի կողմից՝ 43.5 մլն դրամ, պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝ 40.5 մլն դրամ, մասնավոր ներդրումներ՝ 142.5 մլն դրամ, որտեղ կբուծվի շուրջ 300 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ: (Նախորդ տարիներին մարզում խելացի անասնաշենքեր չեն կառուցվել):
- ❖ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ 792, տրամադրված վարկերի գումարը՝ 3 միլիարդ 40 մլն. 350 հազար դրամ:
- ❖ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 28 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 171 մլն.369 հազար դրամ
- ❖ «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 3 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 21մլն.834 հազար դրամ
- ❖ Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր՝ շահառուների թիվը՝ 6 մարդ, տրամադրված վարկերի գումարը՝ 129 մլն 949 հազար դրամ
- ❖ «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր՝ շահառուների թիվը՝ 1 մարդ, տրամադրված փոխհատուցման գումարը՝ 252 հազար դրամ: Եվս 2 պետական աջակցության ծրագրեր կիրականացվեն 2020-2023թթ. ընթացքում, «Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման» և «Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման», որոնց վերաբերյալ արդեն իսկ մարզպետարանի կողմից համայնքներում իրականացվել են իրազեկման աշխատանքներ:
- ❖ Ստեփանավան համայնքում «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի և մասնավոր ներդրման համաֆինանսավորմամբ կառուցվել է խելացի անասնաշենք: Ներդրման գումարը կազմել է 7 մլն դրամ, որից 4 մլն դրամը մասնավոր ներդրմամբ:
- ❖ Ընթացքի մեջ են թվով 6 խելացի անասնաշենքերի կառուցման աշխատանքները (Սպիտակ, Պուշկինո, Վարդաբլուր, Ստեփանավան, Հագվի և Մեծ Պարնի) :